ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀԱՊԱՆԸ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

*All references to Kosovo, whether to the territory, institutions or population, in this text shall be understood in full compliance with United Nations Security Council Resolution 1244 and without prejudice to the status of Kosovo.

ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ադրբեջան, Ալբանիա, Անդորա, Ավստրիա, Բելգիա, Բոսնիա և Հերցոգովինա, Բուլղարիա, Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Թուրքիա, Իռլանդիա, Իսլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լեհաստան, Լիխտենշտեյն, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Խորվաթիա, Կիպրոս, Հայաստան, Հյուսիսային Մակեդոնիա, Հունաստան, Հունգարիա, Մալթա, Միացյալ Թագավորություն, Մոլդովա, Մոնակո, Մոնտենեգրո, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա, Չեխիա, Պորտուգալիա, Ռումինիա, Սան Մարինո, Սերբիա, Սլովակիայի Հանրապետություն, Սլովենիա, Վրաստան, Ուկրաինա, Ֆինլանդիա, Ֆրանսիա:

ԴԻՏՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Կանադա, Ճապոնիա, Մեքսիկա, Սուրբ Աթոռ:

ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ

Եվրոպայի խորհրդի գլխամասային գրասենյակը գտնվում է Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում: Գրասենյակում աշխատում է 2,300 հոգի: Գլխամասային գրասենյակն արտաքին գրասենյակներ և աշխատանքային կապերի համար պատասխանատու ներկայացուցչություններ ունի միջազգային կազմակերպություններում: Եվրոպայի երիտասարդական կենտրոնները Ստրասբուրգում և Բուդապեշտում ժողովրդավարության և մարդու իրավունքների թեմաներով ուսուցումներ են կազմակերպում երիտասարդների համար:

ԲՅՈՒՋԵՆ

Եվրոպայի խորհրդի ընդհանուր բյուջեն 2024 թվականին 624,6 միլիոն եվրո է: Այն հիմնականում ֆինանսավորում են անդամ պետությունները:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Alain Berset
Գլխավոր քարտուղար

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Նրա կազմում են 46 անդամ պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում: Անհատները համապատասխան պետության ներսում բողոքարկման բոլոր հնարավորությունները սպառելուց հետո կարող են մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները ներկայացնել ստրասբուրգյան դատարանին:

Եվրոպական միությունը նախապատրաստվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ստորագրմանը, որի արդյունքում եվրոպական միասնական իրավական տարածք կձևավորվի ավելի քան 700 միլիոն քաղաքացիների համար:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ

Եվրոպայի խորհուրդը հանդես է գալիս արտահայտվելու և լրատվամիջոցների ազատությունը, հավաքների ազատությունը, հավասարությունը և փոքրամասնությունների պաշտպանությունն ապահովելու կոչերով: Կազմակերպության նախաձեռնած հատուկ քարոզարշավներն անդրադառնում են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են երեխաների պաշտպանությունը, պայքարն ինտերնետում ատելություն սերմանող նյութերի դեմ, ինչպես նաև՝ Եվրոպայի խոշորագույն փոքրամասնության՝ գնչուների իրավունքների պաշտպանությունը:

Եվրոպայի խորհուրդն օգնում է անդամ պետություններին կոռուպցիայի և ահաբեկչության դեմ պայքարում, ինչպես նաև՝ դատահիրավական անհրաժեշտ բարեփոխումների իրականացման հարցերում: Եվրոպայի խորհրդում սահմանադրական հարցերով զբաղվող փորձագետների խումբը, որը հայտնի է «Վենետիկյան հանձնաժողով» անվանմամբ, աշխարհով մեկ իրավաբանական խորհուրդներ է տալիս տարբեր պետություններին:

Եվրոպայի խորհուրդն առաջ է մղում մարդու իրավունքների սկզբունքները միջազգային կոնվենցիաների, մասնավորապես՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման կոնվենցիայի և Կիբեռհանցավորության մասին կոնվենցիայի միջոցով: Եվրոպայի խորհուրդը դիտարկող անկախ փորձագիտական մարմինների միջոցով մշտադիտարկում է անդամ պետությունների առաջխաղացումը նշված ոլորտներում և ներկայացնում առաջարկություններ:

Այսօր Եվրոպայի խորհրդի և ոչ մի պետություն մահապատիժ չի կիրառում:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Դիտարկող մարմինները

- Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբը («ԳՐԵԿՕ»)
- Խոշտանգումների և անմարդկային կամ առժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (անգլ. կրճատ՝ «CPT»)
- Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների փորձագիտական խումբ («ԳՐԵՏԱ»)
- Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով (անգլ. կրճատ՝ «CEPEJ»)
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների հանձնաժողով («ՄԱՆԻՎԱԼ»)
- Ռասիզմի և անհանդուրժողության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողով («ԷԿՐԻ»)
- Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողով (անգլ. կրճատ՝ «ECSR»)
- Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական հանձնաժողով
- Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի փորձագետների հանձնաժողով

Եվրոպայի խորհուրդը սերտ գործընկերային հարաբերությունների մեջ է Եվրոպական միության հետ: Եվրոպայի խորհուրդը նաև համագործակցում է Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության և աշխարհի տարբեր տարածաշրջաններում գտնվող բազմաթիվ գործընկեր պետությունների հետ:

Օրինակ, Եվրոպայի խորհրդի Դեղամիջոցների որակի և առողջապահության հարցերով տնօրինությունը, որը կարևոր դեր է խաղում կեղծված դեղորայքի դեմ պայքարի գործում, համաձայնագրեր ունի Բրազիլիայի, Չինաստանի, Հարավային Աֆրիկայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանից զատ, Եվրոպայի խորհրդի կազմի մեջ են մտնում աշխատանքային մի շարք կառույցներ.

- **Գլխավոր քարտուղարը** ղեկավարում և ներկայացնում է Եվրոպայի խորհուրդը:
- **Նախարարների կոմիտեն**, որը բաղկացած է անդամ պետությունների արտաքին գործերի նախարարներից և նրանց ներկայացուցիչներից, որոշումներ կայացնող հիմնական մարմինն է Եվրոպայի խորհրդում:
- **Խորհրդարանական վեհաժողովը** բաղկացած է անդամ 46 պետությունների 612 պատգամավորներից: Վեհաժողովն է ընտրում Գլխավոր քարտուղարին, Մարդու իրավունքների հանձնակատարին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորներին, ինչպես նաև՝ ծառայում է որպես բանավեճերի ժողովրդավարական հարթակ և դիտարկում ընտրությունները: Վեհաժողովի հանձնաժողովները կարևոր դերակատարում ունեն ընթացիկ հիմնախնդիրների ուսումնասիրություններում և քննարկումներում:
- **Մարդու իրավունքների հանձնակատարն** անկախաբար անդրադառնում է մարդու իրավունքների խախտումներին և ուշադրություն հրավիրում դրանց նկատմամբ:
- **Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը** պատասխանատու է տեղական և տարածքային ժողովրդավարության ամրապնդման համար: Այն կազմված է 612 ընտրված ներկայացուցիչներից, ովքեր ներկայացնում են ավելի քան 150 000 տեղական և տարածքային իշխանությունների:
- **Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների խորհրդաժողովը** ներկայացնում է քաղաքացիական հասարակությունը և նպաստում մասնակցային ժողովրդավարության կայացմանը:

Avenue de l’Europe • 67075 Strasbourg • FRANCE

Մեր հիմնական կայքի հասցեն ինտերնետում.
www.coe.int

Եվրոպայի խորհրդի հրապարակումների կայքը.
book.coe.int

Փաստաթղթերի և առցանց աղբյուրների կայքը.
edoc.coe.int

PREMS 063324 • 2024 © Եվրոպայի խորհուրդ •
Photo credit: Եվրոպայի խորհուրդ / Shutterstock • գրաֆիկական դիզայն՝ Les Explorateurs

Հրատարակված է Հաղորդակցությունների տնօրինության կողմից